ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 51. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

1

Հոսող ջրի ուժով աշխատող ջրանիվը օգտագործել են դեռ հին Եգիպտոսում և Բաբելոնում: Այժմ սկսեցին կիրառել ***վերհոսքային անիվը***, որը շարժման մեջ էր դրվում վերևից թափվող ջրի ուժով: Անիվը պտտելու համար բավական էր և ոչ մեծ առվակի ջուրը: Հատուկ ջրհորդանով ջուրը վերևից թափվում էր թիակների վրա և պտտում անիվը: Ջրի հոսքը մեծացնելով՝ արագացնում էին ջրանիվի պտույտը, փոխելով ջրի հոսքի ուղղությունը, փոխում էին պտույտի ուղղությունը, իսկ հոսքը կտրելով՝ անիվի աշխատանքը կանգնեցնում էին:

Թղթի արտադրության մեջ ջրանիվի օգնությամբ բարձրացնում ու իջեցնում էին մամլիչները, լեռնագործության մեջ վերելակով հանքափորներին հանք իջեցնում և վեր բարձրացնում, ավելի շատ հանքաքար էին վեր հանում:

2

Թուջը կրկնակի տաքացնելով՝ այն կոփում էին ջրանիվի ուժով աշխատող 1 տոննա կշռող մուրճերով և ստանում էին բարձրորակ ***պողպատ***:

Շատ թուջ և պողպատ էր անհրաժեշտ հրազենի արտադրության համար: XV դ. արդեն կիրառում էին ինչպես պաշտպանական ծանր, այնպես էլ դաշտային թեթև ***թնդանոթներ***: Կրակում էին ոչ միայն ռումբերով, այլև բեկորային արկերով: Տարածում ստացավ և ձեռքի հրազենը: Հեծելազորում կիրառում էին ատրճանակներ, իսկ հետևակում ծանր հրացաններ՝ ***մուշկետներ***: Հենակի վրա դրված մուշկետից կրակում էին բավականին դիպուկ՝ մինչև 150–200 քայլ: Ասպետական զրահը դադարեց հուսալի պաշտպանություն լինել: Պարիսպները կորցրին անառիկությունը և հեշտությամբ քանդվում էին թնդանոթի արկերից: Ասպետական հեծելազորը սկսեց տեղը զիջել հրազենով զինված բանակին:

3

Օրինակ՝ Ֆրանսիայի հարավում արտադրում էին ձիթապտղի յուղ, որի պահանջարկը մեծ էր հյուսիսային մարզերում, իսկ Ֆրանսիայի հյուսիսում արտադրում էին բարձրորակ մահուդ, որը լավ էր վաճառվում հարավում: Նույնը վերաբերում է տարատեսակ այլ ապրանքների պահանջարկին:

4

Օրինակ, ասեղների արտադրության մեջ աշխատանքի բաժանման հիման վրա տասը աշխատող ունեցող մանուֆակտուրայում մի աշխատողի օրվա արտադրանքը հասնում էր 4800 ասեղի, այն դեպքում, երբ մեկ արհեստավորը, որն ասեղի արտադրության բոլոր գործողություններն ինքն էր կատարում, չէր կարողանում օրական 20 ասեղ պատրաստել:

5

XVII դ. կեսից Անգլիան կարողացավ դուրս մղել Հոլանդիային ու Ֆրանսիային և առաջատար դեր ստանձնել միջազգային առևտրում: Ստրկավաճառությունը դարձավ Անգլիայի մենաշնորհը, ինչը պետությանը մեծ շահույթ էր բերում: Իր հզոր նավատորմի շնորհիվ Անգլիան ստիպեց Պորտուգալիային և Իսպանիային թույլատրել ազատ առևտուր անել նրանց գաղութների հետ: Արդեն XVII դ. վերջին Անգլիան դարձավ Եվրոպայի տնտեսապես ամենազարգացած և ամենահզոր երկիրը:

6

Եվրոպայում առավել նշանավոր տոնավաճառները կազմակերպվում էին Ֆրանսիայի Շամպայն կոմսությունում: Այդտեղ վաճառքի էին հանվում Արևելքից բերված մետաքսյա կտորեղեն, զարդեր և համեմունքներ, Ֆլանդրիայից բերված մահուդ, Գերմանիայից՝ քաթան, Իսպանիայից՝ կաշվե իրեր և այլն:

7

Դրամափոխության համար գանձվող տոկոսները հայերեն կոչվում էին ***«վաշխ»***: Դրա համար էլ մարդկանց, որոնք զբաղվում էին դրամական փոխառություններ տալով, անվանում ենք ***վաշխառուներ***:

«Բանկ»՝ դրամատուն իտալերեն բառը նշանակում էր նստարանով սեղան, որի վրա հաշվում էին դրամը: Բանկերը ապահով վայր էին, որտեղ մարդիկ կարող էին իրենց կուտակած գումարները որպես ավանդ ներդնել և դրա դիմաց տոկոսներ ստանալ: Ավանդի գումարներ ընդունելուց բացի, բանկը բարձր տոկոսով վարկեր էր տրամադրում այն գործարարներին, որոնց առևտուր կամ արտադրություն սկսելու համար դրամագլուխ էր անհրաժեշտ:

Բանկիրները դրամական փոխառություններ տալիս գրավոր ***մուրհակ՝ պարտավորագիր*** էին վերցնում, որով ստացողը պարտավորվում էր պայմանավորված ժամկետում վերադարձնել պարտքը և բանկին տոկոսներ վճարել: Բանկերում զգալի գումարներ էին կուտակվում, իսկ բանկիրները արագ հարստանում էին:

Առևտրական հիմնական գործարքները կնքվում էին ընդարձակ սյունաշար բաց բակում: Յուրաքանչյուր սյուն համարակալված էր, ինչը ցույց էր տալիս, թե որտեղ կարող են իրար հանդիպել և գործարք կնքել տվյալ տեսակի ապրանք գնողներն ու վաճառողները: Ամստերդամի ֆոնդային բորսան կարող էր տեղավորել մինչև 5000 մարդու: Արգելվում էր բղավելը, նաև երեխաների և մուրացկանների մուտքը:

Հետագայում բանկեր և բորսաներ բացվեցին Անգլիայում, Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում: Ժամանակի ընթացքում այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Լոնդոնը, Անտվերպենը և Ամստերդամը, դարձան բորսայական առևտրի և բանկային գործարքների միջազգային կենտրոններ, որտեղ կուտակվում էին մեծ հարստություններ: